Հավելված 6
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2015 **թվականի դեկտեմբերի 21-ի N: 1052 – Ա/Ֆ հրամանի**

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

2015-2016 **ուստարվա ՀՀ դպրոցականների** <<**Կենսաբանություն**>> **առարկայի օլիմպիադայի կազմակերպման և անցկացման**

1. Սույն Ընթացակարգով կարգավորվում են 2015-2016 ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության դպրոցականների <<Կենսաբանություն>> առարկայի օլիմպիադայի /այսուհետ՝ Օլիմպիադա/ կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն Ընթացակարգով սահմանված Հավելվածների ձևանմուշները, առաջադրանքները, պատասխանները, արդյունքները և Օլիմպադայի վերաբերյալ այլ տեղեկությունները տեղադրվում են www.olymp.am և lib.armedu.am կայքերում:
3. Օլիմպիադան կազմակերպվում է երեք փուլով՝ առաջին /դպրոցական/, երկրորդ /մարզային/ և երրորդ /հանրապետական/:
4. Օլիմպիադան անցկացվում է երեք խմբերով.
   I խումբ՝ 9-րդ դաս., II խումբ՝ 10-րդ դաս., III խումբ՝ 11-12-րդ դաս.:
5. Ցածր դասարանում սովորողը կարող է մասնակցել ավելի բարձր խմբի սովորողների օլիմպիադային:
6. Օլիմպիադայի երեք փուլերի տարբերակները՝ ըստ խմբերի, կազմում է հանրապետական առարկայական հանձնաժողովը:
7. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է դպրոցում:
8. Օլիմպիադան կազմակերպելու համար դպրոցի տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում չեն կարող ընդգրկվել կենսաբանություն առարկայի մասնագետներ:
9. Առաջին փուլին կարող է մասնակցել ցանկացած սովորող՝ այդ մասին տեղեկացնելով դպրոցի տնօրինությանը:
10. Դպրոցի տնօրինությունը մինչև 2015 թ. դեկտեմբերի 23-ը ներառյալ հայտագրված աշակերտների վերջնական ցուցակը՝ ըստ Հավելված 1-ի, ներկայացնում է մարզպետարան /քաղաքապետարան/:
11. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը/ մինչև 2015թ. դեկտեմբերի 29-ը ներառյալ մասնակիցների ցուցակները ըստ Հավելված 2-ի ներկայացնում է հանրապետական կազմկոմիտեին՝ info@olymp.am հասցեով:
12. Հանրապետական կազմկոմիտեն հաստատում է առաջին փուլի մասնակիցների ցուցակը, որը տեղադրվում է olymp.am կայքում:
13. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է 2016 թ. փետրվարի 10-ին ժամը 12:30-ին:
14. Օլիմպիադայի առաջին փուլի արդյունքները չեն բողոքարկվում:
15. Դպրոցի տնօրինությունը պատասխանների լրացված ձևաթղթերը հանձնում է մարզպետարան /քաղաքապետարան/ մինչև 2016թ. փետրվարի 11-ին ժամը 17:00:

16. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը դպրոցներից ստացված պատասխանների ձևաթղթերը ներկայացնում է ՀՀ ԿԳՆ, մինչև փետրվարի 12-ը ժամը 17:00:
17. Օլիմպիադայի երկրորդ փուլն անցկացվում է մարզպետարանների /Երևանի քաղաքապետարանի/ կողմից սահմանված վայրում:
18. Երկրորդ փուլին մասնակցում են առաջին փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած աշակերտները՝ հանրապետական կազմկոմիտեի որոշման համաձայն:
19. Օլիմպիադայի երկրորդ փուլն անցկացվում է 2016թ. մարտի 5-ին ժամը 10:00-ին:
20. Օլիմպիադայի երկրորդ փուլի աշխատանքները ստուգում է մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ կողմից ստեղծված առարկայական հանձնաժողովը:
21. Օլիմպիադայի երկրորդ փուլի աշխատանքների արդյունքների բողոքարկումը կատարվում է օլիմպիադայի անցկացման վայրում՝ առարկայական հանձնաժողովի կողմից նշանակված ժամին:
22. Երկրորդ փուլի հաղթողները պարգևատրվում են մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ դիպլոմներով և գովասանագրերով:
23. Օլիմպիադայի երկրորդ փուլի մասնակիցների ցուցակները և ստացած միավորները (ըստ Հավելված 3-ի) մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը/ մինչև 2016թ. մարտի 9-ը ներկայացնում է հանրապետական կազմկոմիտե՝ info@olymp.am էլեկտրոնային հասցեով:
24. Օլիմպիադայի երրորդ փուլն անցկացվում է 2016 թ. մարտի 20-ին և 21-ին սկիզբը՝ ժամը 10:00- ին՝ ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված վայրում:
25. Երրորդ փուլին մասնակցում են երկրորդ փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները՝ համաձայն հանրապետական կազմկոմիտեի որոշման:
26. Օլիմպիադայի երրորդ փուլի աշխատանքների արդյունքների բողոքարկումը կատարվում է օլիմպիադայի անցկացման վայրում՝ առարկայական հանձնաժողովի կողմից նշանակված ժամին:
27. Երրորդ փուլի հաղթողները պարգևատրվում են ՀՀ ԿԳ նախարարության դիպլոմներով և գովասանագրերով:
28. Օլիմպիադայի երրորդ փուլի 10-12-րդ դասարանների դիպլոմակիրները համարվում են կենսաբանության միջազգային օլիմպիադայի ՀՀ թիմի հավակնորդներ: